

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՍԻԱՑԵ՞Ք

336.3

2-79

**,ՀՆԳԱՄՅԱԿԸ ԶՈՐՍ ՏԱՐՈՒՄ՝
ՓՈՒԱՌՈՒԹՅՈՒՆԸ**

(ԹԵԶԻՍՆԵՐ ԳԻՄՆԱՐԿ-ՁԵՐՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵ-
ՐՈՒՄ ՁԵԿՈՒՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՖԻՆՃՈՂԿՈՄԱՏԻ

ՅԵՐԵՎԱՆ

1930

12.06.2013

27980

17 FEB 2010

336.3
Z-72

ՀՆԳԱՄՅԱԿԸ ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ“ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ

(ԹԵԶԻՍՆԵՐ ՀԻՄՆԱՐԿ-ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԶԵԿՈՒՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

Հնգամյա պլանի իրականացումը կմոռեց-
նի մեզ սոցիալիզմին, կբարձրացնի աշխատա-
վորների նյութական և կուլտուրական մակար-
դակը:

Համքի և ուժի հսկա լարումով, աշխատա-
վոր մասսաները կոմունիստական կուսակցու-
թյան ղեկավարությամբ, աշխարհի մեջ միակ
պրոլետարական պետության մեջ, հաջողու-
թյամբ վերակառուցում են իրենց տնտեսու-
թյունը սոցիալիստական հիմունքներով:

Այն հսկա աշխատանքի կոնկրետ արտա-
հայտությունը, վոր կատարեց մոտակա տա-
րիներին քաղաքի պրոլետարիատը և գյուղի
բարակ-չքավորների մասսան՝ դաշնակցած
միջակի հետ, հանդիսանում է Խորհրդային
Միության ժողովրդական տնտեսության շի-
նարարության հնգամյա պլանը։ Հանդիսանա-
լով հսկա աշխատանքի ծրագիրը և սոցիալիս-
տական ընդլայնած հարձակումը մեր յերկրի
արտադրողական ուժերի զարգացման՝ հնգամ-

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ԳՐԱՌԵՊԱՐԱԿԱՆ 5480 (Բ.)
ՊԱՏՎԵՐ 3814 ՏԻՐԱԺ 2000

ՀՀ ՀԱՅ
36662

յա պլանը յելնում ե մոտակա պատմական չըր-
ջանի մեծ խնդիրներից — հասնել և անցնել ա-
ռաջավոր կապիտալիստական յերկրների մա-
կարդակից և գրանով իսկ ապահովել տնտեսու-
թյան սոցիալիստական ձեի հաղթանակը:

Ժողովրդական տնտեսության սոցիալիս-
տական մասի ամրացումը (պետարդյունարե-
րություն, կոռուպտացիա, պետառետուր, սով-
խողներ, կոլխոզներ) արտադրողական միջոց-
ների արտադրության արագ աճումը, դրա հե-
տևանքով, պրոլետարիատի զեկալարող գերի
ուժեղացումը յերկրի տնտեսական կյանքում և
նրա գիշտատուրայի ամրացումը, գյուղա-
տնտեսությանը մեքենաներ և պարարտանյու-
թեր հայթայթելը, վոր զգալի չափով կամրաց-
նի քաղաքի սոցիալիստական ազգեցցությունը
գյուղի վրա և ե'լ ավելի կամրապնդի բանվոր
դասակարդի միությունը գյուղի չքավոր-մի-
ջակ մասսաների հետ, արտադրական զողման
հիմքի վրա. կապիտալիզմի վճռական արմա-
տախիլ անելը գյուղում, ինչպես և քաղաքում
— ահա՛ ինչ ե տալու մեծ աշխատանքների
համյա պլանի նախագծված կատարումը: Աշ-
խատանքը լրիվ կապահովի կոլեկտիվ՝ ձևերի
հաղթանակը գյուղատնտեսության մեջ, ան-
հատական գյուղացիական տնտեսության վրա,
զգալի չափով կթուլացնի մեր կախումը կապի-
տալիստական պետություններից, կրարձրաց-
նի պաշտպանողական ունակությունը, կուժե-
զացնի Խորհրդային Միության հեղափոխակա-

նացնող գերը՝ կապիտալիստական յերկրների
բանվորական շարժման, Արևելքի դադութային
և կիսազալութային յերկրների վրա: Բեռլ
աշխատավարձի բարձրացումը, արդյունաբե-
րական և գյուղատնտեսական արդյունքների
զների իջեցումն զգալի չափով կլապացնեն աշ-
խատավորների նյութական դրությունը: Դըր-
բոցների, ակումբների, զարնթացների, դրո-
գաբանների և այլն լայն ցանցը նրանց հասց-
նում և կուլտուր-քաղաքական մակարդակի
բարձրացման: Մեծ աշխատանքների հնգամ լա-
տրանի կատարումը պայմանավորում է իրենով
և դրամական միջոցների ծախսումը: Բայ հըն-
դամյա պլանի, վոր պիտի զգալի չափով զերո-
զանցվի յենթագրված և անել 64,6 միլլ.
առողջի կապիտալ ներդրումներ:

Բայ առանձին մասերի, նրանք բաժանվու ծ
են հետեւ ալձեռով՝

- | | | |
|-----------------------|------------|------|
| 1. Արդյունաբերություն | 16,4 միլլ. | ոոր. |
| 2. Ելեկտրիֆիկացիա | 3,1 | » |
| 3. Տրանսպորտ | 10,0 | » |
| 4. Գյուղատնտեսություն | 23,2 | » |

Ամբողջ արդյունաբերության մեջ՝ դրվագ-
գումարից 78 տոկոսը ներդրված է ծանր ար-
դյունաբերության մեջ, իսկ թեթևում՝ 22 տո-
կոս: Այդ հսկայական ներդրման հետևանքը
պիտի հանդիսանա այն, վոր պլանավորվող
արդյունաբերության նախագծված ամրող
արտադրանքն ավելանալու յե 2,8 անգամ, իսկ

արտադրական միջոցների արտադրող արդյունաբերությունը՝ 3,3 անգամ։

Գյուղատնտեսության ընդհանուր յեկամուտը կրաքարանա 54 տոկոս։ Բերքատվությունը բարձրանում է 35 տոկոս, ցանքերի տարածությունը լայնանում է 22 տոկոսով։

Չուզունի արտադրությունը, վորի կարիքը մեծ չափով և զգացգում, կրաքարանա 126 միլ. փթից մինչև 600 միլ. փթի։ Քարածուխի ստացումը 35 միլ. տոննից— մինչև 75 միլ. տոնն, մեքենա-շինարարությունը մեծանում է 3,5 անգամ, գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը մի տարվա ընթացքում միջին ուժի հասնում է 150 հազար հատից ավելի։ Յերկաթուղային գծերը կիրարեն մեր յերկրի ծայրամասերը, կմիացնեն նրանց Խոբէհրդային Միության արդյունաբերական և կուլտուրական կենտրոնների հետ, կտան ուժեղ թափ նըրանց տնտեսական զարգացման, զգալի չափով կողնեն դուրս գալու աղքատության և հետամացության ճանկերից, վորի մեջ պահել եր նրանց ցարական կառավարությունը։ Յերկաթգծի ընդհանուր յերկարությունն ավելանում է 21 հազ. կիլոմետրից ավելի, այսինքն՝ կտա 30 տոկոսից բարձր ավելացում և կհասնի 94.042 կիլոմետրի։

Միաժամանակ, արդյունաբերության և գյուղատնտեսության այսպիսի փոթորկալի աճման հետ միասին, անսայթաք կերպով կրաքարանա աշխատավորների տնտեսական-

նյութական մակարդակը։ ռեալ աշխատավարձը բարձրանում է 70,5 տոկոսով, իսկ հողագործական բնակչության յեկամուտը յուրաքանչյուր չնչի վրա՝ 67,4 տոկոսով, և կոլեկտիվ անտեսության մեջ 83,7 տոկոսով։

Դժոմ յա աշխատանքի որ կանցկացվի Խոբէհրդային Միության բոլոր արդյունաբերական ձեռնարկություններում, արանսպարտում և կոմունալ տնտեսությունում։

ՍՈՅ ԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ, ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե ՏԵՄՈՒԵՐԻ ԱՐԱԳ ԶԱՐԿԱՑՈՒՄ

Մեր ինդուստրիայի տեմպերի արագ զարգացումը, վոր նախագծված է 5-ամյա պլանով, գերազանցում է այն ամենին, վոր գիտեր վոչ միայն ցարական Ռուսաստանի, այլև Յերրողայի և Ամերիկայի առաջավոր կապիտալիստական յերկրների տնտեսական կյանքի պատմությունը։ Նրանք ինդիքներ են թելադրում կառուցելու սոցիալիզմը մանր գյուղատնտեսական յերկրում, հետամնաց տեխնիկայով, շրջապատված թշնամի կապիտալիստական յերկրներով գերազանցապես արագ ժամանակում։

«Ինդուստրացման տեմպերի արագ զարգացման հարցը չեր գրվի մեր առաջիր ամբողջ սրությամբ, ինչպես նա գրված է հիմա, յեթե մենք ունենայինք այնպիսի զարգացած արդյունաբերություն, նույնպես ել զարգացած

տեխնիկա, ինչպես, ասենք, ունի Գերմանիան, յիթե ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ ինդուստրիալի տեսակարար կշիռը լիներ մեզ մոտ նույնպես բարձր, ինչպես, որինակ, Գերմանիայումն է։ Բայց բանն ել հենց այն ե, վոր մենք այս տեսակետից կանգնած ենք Գերմանիայի հետև և, տեխնիկա-անուեսական իմաստով, մենք դեռ չենք հասել նրան։

Ինդուստրիալի տեմպերի արագ զարգացման հարցն իր սրությամբ չեր ծառանա և այն ժամանակ, յիթե մենք ներկայացնելինք պրո- նարական դիկտատուրայի վոչ միակ յերկի- րու, այլ լինելինք պրոլետարական դիկտատու- րու, վոչ միայն մեր յերկրում, այլև ուրիշ, ա- վելի առաջավոր յերկրներում, ասենք՝ Գերմա- նիայում և ֆրանսիայում։

Բայց դուք լավ գիտեք, վոր մենք դեռ չու- նենք այդ պայմանները, վոր մենք դեռ հանդի- տանում ենք պրոլետական դիկտատուրայի միակ յերկիրը՝ ըրջապատված կապիտալիո- տու կան յերկրներով, վորոնցից շատերը, տեխ- նիշտական-անտեսական իմաստով, մեզանից շատ առաջ են կանգնած»։ (Առաջին. ՀԿԿ (բ) կի-ի նոյեմբերյան պլենումում արտասանած նայից)։

Այդ տեմպերի մասին, վորոնք հնարավո- րություն պիտի տային հասնել և անցնել տըն- տեսապես առաջավոր կապիտալիստական յեր- կրին երից, ընկ. Լենինը հարցր դրեց, վորպես միը զարգացման մահու և կենաց հարց։

«Միայն այդպիսի տեմպերը կարող են մեկ հնարավորություն տալ վերափոխելու մանր մասերի բաժանված գյուղացիական տնտեսու- թյունը, միայն նրանք կարող են տպահովել գյուղի սոցիալիստական վերակառացումը արմատախիլ անելու մեր յերկրի կապիտալիս- տական մնացորդները։

Հար կավոր ե աստիճանաբար, բայց սիս- տեմատիկորեն ու համառ կերպով գյուղական տնտեսությունը փոխադրել նոր տեխնիքական րազայի, խոչոր արտադրական բազայի վրա՝ ձգելով այն դեպի սոցիալիստական արդյունա- րաբերություն։ Կամ մենք խնդիրը կլուծենք և այն ժամանակ հաղթանակը վերջնականացնե- ապահոված ե, կամ մենք կհեռանանք նրա- նից, խնդիրը չենք լուծի և այն ժամանակ դուր- ծը դեպի կապիտալիզմ կարող ե գառնալ տն- խուսափելի յերկույթ։»

ՆԳԱՍՅԱ ՊԼԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԴՈՒԿԵՍՆ ԱՆՑԱՎ ՅԵՆԹԱԴՐԱԾ ՊԼԱՆԻ ԳԵՐԱԶԱՆՑ ԱՃՄԱՆ ՆՇԱՆԻ ՏԱԿ.

Հնգամյակի առաջին տարին ցույց տվեց, վոր նշանակված տեմպերը վոչ միայն չեն հան- դիսանում ուժերից վեր, ինչպես դրանում հա- մոզված եյին աջ ովորտունիստները՝ վախենա- լով սոցիալիստական շինարարության գմբա- րություններից, այլև խորհրդացին յերկրի խորքերում գտնվում են հակայտական հարմա- րություններ, վորոնք թույլատրում եյին կա-

տարելու պլանով ծրադրված յենթադրությունները:

Ահա մի քանի թվեր՝ տուժներն ապացուցելու համար: Ամբողջ արդյունարերության ընդհանուր արտադրանքն աճել է 23,4 տոկոս՝ հնգամյա պլանով նախատեսված 19 տոկոսի դիմաց, ըստ վորի, արտադրության միջոցների և գործիքների խումբը՝ մինչև անգամ 26,2 տոկոս:

Կառպիտալ ներդրումները բարձրացան 26,7 տոկոսով՝ հնգամյա պլանով այս ասրը և համար նախատեսված է 25,9 տոկոսի դիմաց: Երեկորդկայնների հզորությունը բարձրացավ 22,1 տոկոսով՝ պլանով նախատեսված 14 տոկոսի փոխարեն:

Վորակական ցուցանիշների առաջարիգում առաջին տարին մենք տեսնում ենք զվալի շարժումներ, չնայած՝ պլանացին առաջադրանքները և չեյին կատարված:

Հնգամյակի առաջին տարվա հաջողությունները թույլատրեցին սահմանել ընթացիկ տարվա համար շինարարության ավելի մեծ ծավալ, քան այդ նախատեսված եր հնգամյա պլանով: Այսպես, պետական բյուջեն հասնում է վոչ թե 9,2 միլլ. ոռորդու, այլ 11,6 միլլ. ոռորդու, ամբողջ արդյունարերության ընդհանուր արտադրանքն աճում է վոչ թե 20,2 տոկոսով, այլ 32,1 տոկոսով: Աշխատանքի արտադրականությունը բարձրանում է 25 տոկոսով, այլ վոչ թե 15—16 տոկոսով: Ինք-

նարժեքն իջնում է վոչ թե 7,4 տոկոսով, այլ 11 տոկոսով, ինչպես նախատեսված եր հընդամյա պլանով: Այս տարվա կապիտալ ներդրումները կգերազանցեն 48,1 տոկոսով, այս տարվա համար և 8,1 տոկոսով 32—33 տարվա համար հնգամյակովնախատեսվածից:

Ընթացիկ տարվա առաջին կիսամյակի արդյունքները վկայում են սոցիսլիստական շինարարության զարգացման տեմպերի ավելի արագությունը՝ անցյալ տարվա համեմատ: Այսպես, ընդհանուր բերքն ավելացավ 29,4 տոկոսով, աշխատանքի արտադրողականությունը՝ 18,7 տոկոսով, ինքնարժեքն իջակ 4,8 տոկոսով: Առանձնապես ուժեղ աճում տվեց արտադրական միջոցների արագությունը արդյունարերությունը (37,8 տոկոս):

Բայց համեմատելով ընթացիկ տարվա առաջին կիսամյակի արդյունքները հնգամյակով նախատեսված ստուգիչ առաջադրանքների հետ՝ մենք տեսնում ենք, վոր արդֆինպլանի իրագործման բնագավառում արդյունաբերության մի քանի ճյուղերի մեջ կան մի քանի ճեղքվածքներ:

Պրոլետարիատի աճող ակտիվությունը, հարվածայնության լայն ծավալը, սոց. մըրժման, աշխատանքի կարգապահության բարձրացման համար մզվող պայքարը հանդիսանում են գրավական այն բանի, վոր ճեղքվածքները լիկվիդացիայի կենթարկվեն: Ինդուստրիայի բնագավառում սոց. շինարարության

Հոգովուոթյունները գյուղի սոցիալիստական վերակառուցման վրա հսկայական ազդեցություն ունեցան, ծառայեցին վորպես ստիմուլ գյուղի հիմնական չքավորմիջակ մասսաների հնական թեքման՝ կոլեկտիվացման կողմը։ «Ոստիբացիայի ընդլայնումը՝ չքավորների կազմակերպումով և միջակի հետ դաշնքի ամրացումը՝ կուլակի մեկուսացումով, սոցիալիստական խոշոր հողագործական պրոպագանդով կոլխոզներին և առանձնապես սովորություններին փորձի որինակով ցույց տվեց նրա իրական առավելությունների, մեջնատրակտորային կայանների կազմակերպումով և գյուղատնտեսության մեջ նոր տեխնիկա մտցնելով՝ կուսակցությունն ստեղծեց այնպիսի պայմաններ, վորոնց հիման վրա ընդլայնվեց այդ հսկա կոլխոզային շարժումը։ Զնայած կոլխոզինարարության բնագավառում տեղի ունեցած կուս գծի խեղաթյուրումներին, չնայած անհավատալի դժվարություններին, չնայած բոլոր և ամեն տեսակի մութումների հուսահատական հակագործողությանը կուլակներից ու տիբացուներից մինչև ֆիլիստիքները, աջ ոպորտունիստները»— կոլեկտիվ տնտեսություններն անշեղորեն աճում և ամրանում են։ Որինակ՝ գյուղացիական տնտեսությունների մեկ յերբորդ մասն արդեն կոլեկտիվացած է։ Համատարած կոլեկտիվացման հաղի վրա, կուլակությունը, վորպես դաստիարակ, լիկվիդացիայի յե յենթարկվում։

Հետագայում գյուղի կոլեկտիվացման զարգացման և ամրապնդման համար, բացվում են մեծ հնարակություններ՝ չնորհիվ գյուղատնտեսական մեքենաշինարարության հսկայական տեխնիկի և գյուղատնտեսությանը կատարելագործված գործիքներ մատակարարելու (տարեկան 150 հազար տրակտոր, միջին կարողությամբ հնգամյակի վերջում յերեք միլիորդի գյուղատնտեսական մեքենաներ)։

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻՍՅԻ ՅԵՎ ՆԵՐՔԻՆ ՀԱԿԱՑԵԼԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՉԻ ՀԱԶՈՂՎԻ ԿԱՍԵՑՆԵԼ
ՄԵՐ ՍՊԾԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալիստական շինարարության հաջողությունները բարձրացնելով պլանային տրնտեսության տեսակարար կշեռվ, դարձնելով պրոլետարական պետությանն ավելի ուժեղ ամրոց՝ վերջին և վճռական կովում կապիտալի և աշխատանքի աշխարհների միջև, հեղափոխականացնելով կապիտալիստական յերկրների տշխատագործական ավելի մեծ և ուժեղ կերպով են տատանում կապիտալիզմի հիմքերը, ավելի խորացնում են աճող սոցիալիզմի և կապիտալիզմի յերկրների մեջ յեղած հակառակությունները։

Ապրելով «կայունացման քայլայման ըսկիզբը» խեղղվում եւ անլուծելի հակասությունների ճիրանների մեջ։ Կապիտալիստական աշխարհն ուժեղ կերպով զինվում եւ պատ-

ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՆԴՈԽԱՏՐԱԼԻԶԱՑԻԱՅԻ
ԼՈՒՐՉ ՀԵՆՍՐԱՆՆ ԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵ-
ԳՐՈՒՄԸ, ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱԿՏԻՎ ՄԱՍ-
ՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԵՎԵՐԻՑ ՄԵԿՆ Ե

Պետական վարկի ժողովրդական տնտեսու-
թյան Փինանսավորման համար, փոխառու-
թյունը մեծ գեր և խաղում։ Բավական և ցույց
տալ այն, վոր հնգամյակի ընթացքում պետա-
կան վարկը պիտի տա 6 միլլ. ռուբլի, ժողո-
վը վարդական տնտեսությունը Փինանսավորելու
նպատակով, (11,2 տոկոս ամբողջ ողբեական
բյուջեյի), վորպեսզի հասկանալի լինի պետա-
կան փոխառությունների գերի կարևորությու-
նը, նրանց նշանակությունը, սոցիալիստական
շինարարությունն անընդհատ Փինանսավորե-
լու գործում։

Փոխառությունների իրացումը բնակչու-
թյան մեջ կտա 3,1 միլլ. ռուբլի։

Մասսաների գիտակից և տկարիվ մասնակ-
ցությունը շինարարության մեջ տանձնապես
ցայտուն կերպով հանդես յեկավ վերջին մաս-
սայական փոխառությունների տեղավորման
ժամանակ։ Հետաքրքրությունը դեպի մերջին
ինդուստրացման փոխառությունն այնպէս մեծ
էր, վոր բանվորների սպահանջով կառավարու-
թյանը մնամ եր փոխառությունը բաց թղթնել
յերկու անդամ և հասդնել այն 950 միլիոն ռուբ-
լու (յենթագրված 750 միլ. ռուբլու փոխա-
րեն)։

բաստվելով նոր պատերազմի, առաջին չեր-
թին, Խորհրդային Միության դեմ։ Զին-Արե-
վելյան յերկաթղթի կոնֆլիկտը, պապական
ֆաշիստական քարոզը՝ խաչակրած արշավանք
մղել Խորհրդային Միության դեմ, Վարչավա-
յի խորհրդային լիազոր ներկայացուցչությու-
նը պայթեցնելու անհաջող փորձը— այս բոլո-
րը նոր փաստեր են ապացուցելու, վոր կատար-
վում ե նոր միջազգային պատրաստություն,
վոր իմպերիալիստական պատերազմի վտանգը
Խորհրդային Միության դեմ դառնում ե առա-
վել քանի իրական, առավել քան չոչափելի և ան-
միջական»։

Միջազգային կապիտալի՝ մեր խաղաղ
սոցիալիստական շինարարությունը կասեցնե-
լու փորձի, կուրտկային ելեմնուների ուժեղու-
ցըած դիմաղիր պայքարի՝ գյուղի կուեկտի-
վացման դեմ, բանկոր զասակարգը պատառ-
խանեց «Հնգամյակը չորս տարում» լոգունգով
լայն տարածելով սոցիալիստական մրցությու-
նը, հարվածայնությամբ, աշխատանքի արտա-
դրողկանության բարձրացումով, ինքնարժեք-
ների իջեցումով, լայն կերպով մորելիզացիայի
յինթարկելով ներքին միջոցները սոցիալիստա-
կան շինարարության համար։

Խորհրդային պետության մեջ՝ պետական պարտքը բնակչությանը 1930 թ. մարտի 1-ին հասնում է 1854 միլ. ոռորդի, այսինքն՝ 11,9 ոռորդի բնակչության յուրաքանչյուր շնչին, վոր կապիտալիստական պետությունների պարտքից անհամեմատ ավելի քիչ է։ Այսպես, Ամերիկայում մինչեւ պարտերազմը յուրաքանչյուր անձին կազմում եր 26 ոռորդի, Ֆրանսիայում՝ 342 ոռորդի, Անգլիայում՝ 150 ոռորդի, Իտալիայում՝ 156 ոռորդի, Ռուսաստանում՝ 98ոռորդի։ Պատերազմից հետո այդ պարտքն զգալի չափով բարձրացավ և արգեն Ամերիկայում հասնում է 430, Անգլիայում՝ 1628 ռ., Ֆրանսիայում՝ 2720 ոռորդի, Իտալիայում՝ 1076 ոռորդի և ցարական նախկին Ռուսաստանում հետպատերազմյան պարտքը հասնում է 377 ռ. 50 կ.։

Ցարական Ռուսաստանի պարտքն իր և ուրիշ կապիտալիստական յերկրների, բարձրացավ գլխավորապես պատերազմական հսկայական ծախսերը ծածկելու անհարժեշտությունից և հեղափոխական շարժումները ճնշելու հետեւանքով։

Ցարական Ռուսաստանը 1905 թվին, հատկապես Կոկովցելին ուղարկեց Փարիզ (հետո Փինանսների մինիստրին)՝ հեղափոխությունը ճնշելու նպատակով փոխառություններ ստանալու համար։ Բուրժուական Ֆրանսիան և ուրիշ կապիտալիստական յերկրները, ցարական

Ռուսաստանին 873.750.000 ռուբլի տվին, վորով զգալի չափով ամբացրին ինքնակալության գիրքերը։

Ռուս-յապոնական պատերազմը նաև ցարական Ռուսաստանին 2443 միլ. ռ. 1914-15 թվի պատերազմը նոտեց մի ահռելի զումար՝ 59.960 միլ. ոռորդի։ Ռուսաստանի պետական պարտքը կազմում եր 1914 թվի հունվարի 1-ին՝ 13.241 միլ. ոռորդի, իսկ պատերազմի ժամանակ բաց թղղնվեցին 133.25 միլիոն ոռորդու փոխառություն։

Պետական պարտքի աճման արդյունքը հանդիսանում է յուրաքանչյուր տարի փոխառությունների համար տոկոսների և մարման հետ կապված վճարումների աճումը։

Ցարական Ռուսաստանի պետական փոխառությունների վճարումը մինչեւ պատերազմը կազմում եր 500 միլիոն ոռորդի։

Յեթե ցարական կառավարության պետական պարտքը խորհրդային պետության կողմից չոչնչացվեր, ապա պատերազմից հետո՝ մենք ցարական փոխառություններով պարապորված պիտի տարեկան վճարելինք 2000 միլիոն ոռորդի։

ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՌԵՖՈՐՄԸ ՅԵՎ ՈԺԱՆԴԱԿ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Խորհրդային պետական փոխառությունների իրացումը բնակչության աշխատավոր մասսաների մեջ տարեց-տարի տճում է։ 1927

թվից մինչև 1930 թվի մարտի 1-ը ժամանակի հոմար այն բարձրացավ 284 միլիոն ռուբլուց մինչև 1,854 միլ. ռուբլու. առանձնապես մեծ չաջողություն ունեցան ինդուստրացման փոխառությունները: Այսպէս ինդուստրացման առջին փոխառությունը բանվորների և ծառայողների մեջ իրացվել է 113 միլ. ռուբլու, ինդուստրացման 2-րդ փոփոքը՝ 415 միլ. ռուբլու, 3-րդը՝ 671 միլիոն ռուբլու: Պետական փոխառությունների իրացման զործում ամենի քիչ ժամանակցւթյուն են ունենում գյուղացիները: Ինդուստրացման 2-րդ փոխառությունը գյուղացիության մեջ իրացվել է 205,9 միլ. ռուբլու:

Վերջին տարիներս պետական փոխառությունների ընակավառում ունեցած մեծ չաջողություններին զուգընթաց, Հայտաբերվել են անցանկարի յերեվույթներ, պարագաները ժամանակից շուտ գաճառելու դմասառվ, վորագումնակեամբ մեծ չափերի յև համել 1929 թվական: Հաշվի չառնելով պետական փոխառությունների յերկարատև պահելու կարելորությունը, նայելով նրանց վրա վորագես միջոց՝ ազատ դրամները կարծ ժամանակով պահելու համար՝ գյուղի և քաղաքի գիտակցության ցածր մակարդակի վրա կանգնած խավերը պարտատմները ժամանակից շուտ են վրացնել, վորով և արգելք են հանդիսացել պլանով նշանած աշխատանքի կատարմանը:

Քաղաքի կաղմակերպված պրոլետարիա-

տի առաջավոր մասը, վոր խնամքով և հոգառարությամբ եր նայում արտադրական պլանի անընդհատ կատարման վրա, մի շարք Փարբիկա-գործարանային կոլեկտիվների ժողով-ների տառջ հարց գրեց վարկի յերկարատեղությունն առաջնավելու համար: Խորհրդային հասարակության պայքարի առաջին շրջանը պետվարկի յերկարատեղություն համար պարտառումների կոլեկտիվ կերպով պահ տալին եր: Բայց ցանկալի հետեւվանքներ չափեց այն:

Հաշվի տոնելով այս գրաւթյունը՝ Փարբիկա-գործարանային մի շարք կոլեկտիվներ հարց բարձրացրին կուսակցական և կառավարուկան որդանների առաջ՝ պարտառումներնախամանությունունութիւնը յերեվույթի գեմ պայքարելու անհրաժեշտության մասին, վոր թույլ եր տրվում մի քանի քիչ գիտակից աշխատավորների կողմից՝ պարտառումների անհատական կարգադրության վրա հասարակական հրակողություն սահմանելու միջոցով:

Կառավարության վորոշման համաձայն, հասարակական հակողության պարտականությունները գրաւում են ոժանդակող հանձնաժողովների վրա: Նրանք բավականին ծանոթ են պարտառումնատիրոջ նյութական գրությունը: Պարտառումների գնումը և փոխառություն առաջ դրագականով, կարող են կատարել վարկային հիմնարկները, միայն այն գեպքում, յերբ պարտառումնատերերն ոժանդակող համա-

նաժողովի կողմից համապատասխան թույլ-
ավություն ունեն:

Այս բանը ոժանդակող հանձնաժողովնե-
րին պարտագրում և համաձայնեցնել յերկարա-
տել վարկի շահերը, պարտասոմատիրոջ հը-
նարավորությունների հետ՝ ոգտագործելով
պարտատառմն իրական կարիքի դեպքում: Վե-
րին աստիճանի ծանր աշխատանք և այդ և ո-
ժանդակող հանձնաժողովներից պահանջվում
է զգայուն, ուշադիր մոտեցում յուրաքանչյուր
գիմումի քննության, վաճառելու կամ
դրագ դնելու համար: Ոժանդակող հանձնաժո-
ղովները պիտի ապահովված լինեն փորձված և
հասարակայնորեն ստուգված ընկերների կազ-
մով: Դասակարգային թշնամիները քաղաքում
և գյուղում ցանկանում են ոգտագործել հասա-
րակական հակողության սահմանումը՝ պետա-
կան վարկը վարկարեկելու և նրա խոկ շինարա-
րական պլանը խանգարելու նպատակով: Լայն
ազիտացիոն-պրոպագանդիստական աշխատան
քով բացարձելու պետական վարկի նպատակնե-
րի և նշանակության ու հասարակական հոկո-
զությունը վորպես միջոցներ նրա յերկարա-
տելությունը ապահովելու համար, ոժանդա-
կող հանձնաժողովները պիտի հակագրվեն
գյուղում կուլակային ագիտացիային, քաղա-
քում՝ ամեն տեսակ հակահեղությական ելե-
մենտներին:

Պետվարկի վերակառուցման հետ կապված
ձեռնարկումների կիրառումը պահանջում է

դեպի իրեն կրկնակի ուշադրությունդյուղում:
Միջոցների մոբիլիզացիան՝ «Հնդամյակը չորս
տարում» կատարումն ապահովելու նպատակով
վորնշանակում և գյուղանտեսության սոցիա-
լիստական սեկտորին տրակտորներ և այլ գյու-
ղատնտեսական մեքենաներ մատակարարելու
տեմպերի արագացում, բավականին չափով
հասկանալի և մոտ ե գյուղացիական չքավոր-
միջակ մասսաներին:

Բայց գյուղական միասին, վոխառություններ
վաճառելու նոր ձեվ անցկացնելը, վոր կիրառ-
վում է հասարակական հսկողության կարգով,
գյուղում հանդիպում և մի քանի գժվարու-
թյունների, գյուղական ոժանդակու-
ղովների առանձնապես թույլաշխատանքների և
մի շարք տեղերում այդպիսիների բացակայու-
թյան հետեւվանքով:

Այս պատճառով անհրաժեշտ և բանվորա-
կան կազմակերպությունների կողմից ամենա-
յեռանդուն միջոցներ ցույց տալ գյուղական ո-
ժանդակող հանձնաժողովներին՝ իրենց աշխա-
տանքի մաքսիմում ակտիվությամբ և ամենալ-
յայն բացարարական կամպանիա կազմակերպե-
լով գյուղացիության մեջ:

Լայն բացարարական կամպանիա տանելուն
գուգրնթաց, կապված ինդուստրացման նոր
վոխառության բաց թողման հետ, վորով պի-
տի վոխանակվեն ինդուստրացման վոխառու-
թյունները և գյուղացիական տնտեսության ամ-
րացման վոխառությունը, ինչպես և պարտա-

տոմսերի վաճառքի և գրավ դնելու նոր կարդի մասսայականացնելը, անհրաժեշտ ե աշխատանքը տանել առանձին հաստատակամությամբ, ձեռք բերած հաջողությունների ամրացմամբ և հետեւի բաժնեգրման մուծումներին ճշտությամբ և ծրագրված կերպով կատարելուն։ Բացի գրանից, անհրաժեշտ ե մեծաշխատանք կատարել՝ փոխառության բաժնեգրման մեջ, ընդդրկելու արտադրության մեջ նոր մտնող բանվորներին ինչպես և սեղոնային բանվորներին։

Խորհրդային Միության աշխատավոր բընակչության թույլ Փոնդային գրագիտությունը, վորք դժվարացնում է ոգտվելու պետական փոխառությունների անձնական ոգուտներից՝ մասսայական փոխառությունների պայմանների տարբեր լինելու հետևանքով, (մինչև այսոր 45 միլիոն ռուբլի շահումներով և կուպոններով չեն պահանջվում բնակչության կողմից) մեծ ծախսեր են պետության համար, կազմված մասսայական փոխառությունների շատ վիճակահանությունների կազմակերպման հետ, հարկադրեցին հարց դնել բոլոր փոխառությունները մեկ փոխառության մեջ միացնելու մասին։

«Հնդամյակը չորս տարում» փոխառության իրացումը, ինդուստրացման 1-ին, 2-րդ և գյուղացիական անտեսության ամրացման փոխառությունների պարտատոմսերի փոխանակման հետ միասին նոր փոխանակման պար-

տատոմսերով՝ իր նպատակն է դնում միացնել հիշյալ փոխառությունները մեկ փոխառության մեջ և դրանով հեշտացնել աշխատավոր բնակչության համար հետեւի շահումներին՝ իր ժամանակին ստանալու կուպոնների տոկոսները, կրծատել պետական ծախսերն ըստ վիճակահանությունների և այլն։

Փոխանակումը տարվում ե այնպիսի պայմաններով, վոր նա չի կապված վոչ մի կորսորդ հետ։ Ինդուստրացման 1-ին և 2-րդ և գյուղացիական տնտեսության ամրացման փոխառությունների՝ մի կողմից և մյուս կողմից՝ «Հընդամյակը չորս տարում» փոխառության մեջ յեղած յեկամուտների տարբերությունը կը վեճարվի բնակչությանը։ Պարտատոմսատիրոջ շահերը բոլորովին չեն տուժի։

Փոխանակումը պիտի տարվի «Հնդամյակը չորս տարում» փոխառության իրացման հետ միասին։

Պարտատոմսերի փոխանակումը պիտի վերջանան 1931 թ. հունվարի 1-ին։

1931 թ. հունվարի 1-ից սահմանվում ե արտօնյալ շրջան, մինչև 1934 թվի հունվարի 1-ը։ 1931 թվի հունվարի 1-ից հետո փոխանակման ներկայացվող պարտատոմսերի վրա չեն բարդվում տոկոսներ և նրանք զրկվում են վիճակահանություններին մասնակցելու իրավունքից։

Պահանջամատ և դրաված պարտատոմսերն, ինչպես կանոն փոխանակում են վար-

կային հիմնարկներում։ Միայնայ ն դեպքում,
յերբ պահ տված բայց գրավ չդրված պարտա-
տոմսին հարկավոր չի վճարել տոկոսներ՝ ժամ-
կետանց կտրոններով կամ շահումներ, նրանք
փոխանակվում են այն վարկային հիմնարկնե-
րի յերթեվեկող գործակալների կողմից, վո-
րոնք տվել ելին փոխառվային վկայականներ։

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆԸ ՊԻՏԻ
ՆԱԽՈՐԴԻ ՇԱՀՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ։

«ՀՆԳԱՄՅԱԿԸ ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ» ՓՈԽԱ- ՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

I

ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԳՈԽՄԱՐԸ, ԺԱՄԿԵՏԸ ՑԵՎ
ՄԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հնգամյակը չորս տարում» փոխառու-
թյունը հանդիսանում է միասնական փոխա-
ռություն՝ ժողովրդական անտեսության զար-
գացման հնգամյա պլանով սոցիալիստական
շինարարությունը ֆինանսավորելու համար։

Փոխառությունը բաց է թողնվում յերկու
մասով—մի մասը՝ տոկոսաբեր շահող, իսկ
մյուսը՝ անտոկոսաբեր շահող։

Փոխառությունը բաց է թողնվում 10 տա-
րի ժամանակով՝ 1930 թվի գեկտեմբերի
1-ից մինչև 1940 թ. գեկտեմբերի 1-ը։
Նոր փոխառությամբ պետք է փոխարինվեն
ինդուստրացման 1-ին և 2-րդ փոխառություն-
ները և Գյուղատնտեսության ամրացման փո-
խառությունը։ Վորովհետեւ «հնգամյակը չորս
տարում» փախառությունը բաց է թողնվում
նույն պայմաններով, ինչպես և ինդուստրաց-
ման 3-րդ փոխառությունը, ուստի աննպատա-
կահարմար ե վերջինիս պարտատոմսերը փո-
խարինել «հնգամյակը չորս տարում» փոխա-
ռության պարտատոմսերով։

25

Փոխանակվող փոխառությունների պարագատոմսերը «Հնդամյակը չորս տարում» փոխառության հետ փոխարինելու համար բաց եթողնվում 500 միլ. ռուբլու պարտատոմսեր, իսկ 1930-31 և 1931-32 տարիներում իրացնելու համար՝ ամեն անդամ վորոշվում ե առանձին՝ ԽՍՀՄ ժողկոմիորհի կողմից:

Փոխառությունը մարզվում ե 10 տարվա ընթացքում՝ հաշված բաց թողնված որից: Սակայն, մասնակի մարումն սկսվում ե ավելի շուտ, այն ե՝ առաջին շահող վիճակահանություններից: 10 տարվա ընթացքում փոխառության ամեն մի տեսակի համար տեղի յեւնենում 38 շահող վիճակահանություն՝ տարեկան 4 ամդամ, իսկ վերջին տարին՝ յերկու վիճակահանություն:

Բացի դըանից, սկսած 1936 թվից, տարեկան մի վիճակահանությամբ, կատարվելու յեւնիության մարման 5 վիճակահանություն:

Շահումների քանակն ու դումարը մարման վիճակահանություններից հետո քչանում են. բայց վորովհետեւ շահող պարտատոմսերը մարզվում են և դուրս են գալիս հետագա վիճակահանություններին մասնակցելուց, ուստի շահելու շահսերը վոչ թե պակասում, այլ վորոշ չափով ավելանում են, նկատի ունենալով, վոր վիճակահանության մասնակցող պարտատոմսերի քանակն ևս քչանում ե:

II ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ, ՇԱՀՈՒՄՆԵՐԻ ԶԱՓԼ ՅԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՈԳՏԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Պարտատոմսերի արժեքը սահմանված է հիսում ոռոքի: Բայց վորպեսզի հնարավորություն տրվի գյուղացիներին և շատ քիչ աշխատավարձ ստացող բանվորների ու ծառայողների խմբերին ևս մասնակցելու փոխառությանը, պարտատոմսերի մի մասը բաց եթողնվում բաժանելի: Բաժանվող պարտատոմսերը բաց են թողնվում յերեք կարգի՝

ա) պարտատոմսը բաժանվում ե 2 հավատար մասի, ամեն մի մասը 25 ոռոք,

բ) պարտատոմսը բաժանվում ե 10 հավատար մասի, ամեն մի մասը 5 ո.

գ) պարտատոմսը բաժանվում ե 20 հավատար մասի, ամեն մի մասը 2 ո. 50 կ. բացառապես գյուղատնտեսության ամբացման փոխառության պարտատոմսերը փոխանակելու համար:

Բաժանվող պարտատոմսերի առանձին մասերը համարակալվում են միասնակալ №-ով, շրջաբերության մեջ են մանում ինքնուրույն կերպով և իրենց տերերին համապատասխան չափով ողուած են բերում ($\frac{1}{2}$, $\frac{1}{10}$ — $\frac{1}{20}$), վոր տալիս ե ամբողջ պարտատոմսը՝ լինի այդ շահում, թէ $\frac{1}{2}$ ային յեկամուտ: Նոր փոխառության շահումները սահմանված են 200, 1000 և 5000 ո. չափով, ինչպես և ինդուստրացման 3-րդ փոխառության շահումները:

Ընդհանրապես՝ «Հնդամյակը չորս տարում» փոխառությունը բաց և թողնվում նույն հիմունքներով և պայմաններով, ինչպես և ինդուստրացման Յ-րդ փոխառությունը:

III

ՊԱՐՏԱՏՈՄՍԻ ՏԵՐԵԲԻ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ— ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԻՑ

«Հնդամյակը չորս տարում» Պետական Ներքին փոխառության պարտատոմս ունեցողները, համաձայն իրենց ունեցած պարտատոմսի, ստանում են տարեկան 10 տոկոս:

Պարտատոմսերի այս 10-առկոսային յեկամուտը պետության կողմից վճարվում է յերկու տեսակ. 1. տոկոսներով և շահումներով, կամ 2. մենակ շահումներով, նայած, թե վոր տեսակին և բաժանորդագրվել պարտատոմսատերը։ Տոկոսաբեր շահող փոխառությունից պարտատոմս ունեցողը տարեկան ստանում է 6 տոկոս կտրոններով և 4 տոկոս՝ շահումների միջոցով։ Անտոկոս շահող փոխառության ամբողջ 10 տոկոսը տրվում է շահումների միջոցով։ Պարզ է, վոր անտոկոս շահող փոխառությունից շահելու շահսերը 2-ից պես անդամ ավելի մեծ են։

Տոկոսների վճարումը—տոկոսաբեր շահող փոխառության (տարեկան 6 տոկոսը)—տարեկան մի անգամ վճարում է կտրոնով՝ սկսած 1 գեկտեմբերի, 31 թ.։

IV ՇԱՀՈՒՄՆԵՐ

Փոխառության ժամկետի առաջին 9-ը տարում փոխառության ամեն մի տեսակի համար կատարվում է տարեկան 4 վիճակահանություն, իսկ 10-րդ տարում՝ 2 վիճակահանություն, ընդամենը՝ 38։ Վիճակահանությունը կտարգում է ամեն մի տեսակի համար առանձին, սակայն, մեկը մյուսից անմիջապես հետո։

Շահումների քանակը վիճակահանություններում գասավորված են հետևյալ ձևով։

Անտոկոս շահող փոխառության յուրաքանչյուր մասի առաջին 24 վիճակահանություններին պիտի խաղացվեն հետեւյալ շահումները. 2 շահում՝ 5000 ոռոբլիանոց, 20 շահում՝ 1000 ոռոբլիանոց և 5788 շահում՝ 200 ո.։ Հետեւյալ 14 խաղարկություններին շահումների քանակը կրծատվի։

Բաց թողած տոկոսաբեր փոխառության մասի շահումների քանակը քիչ է։ Այսպես, առաջին վիճակահանություններին, փոխառության այդ տեսակի յուրաքանչյուր մասում պիտի խաղացվեն հետեւյալ շահումները-մեկ շահում՝ 5000 ոռոբլիանոց, 20 շահում՝ 1000 ոռոբլիանոց և 2440 շահում՝ 200 ոռոբլիանոց։ Հետեւյալ վիճակահանությունների շահումների քանակը կրծատվում է, բայց այնքան, վորքան խաղարկություններին քիչ թվով պարտատոմսեր են մասնակցում, իսկ տանելու

շահսերն (ինչպես և անտոկոս շահող փոխառություն) առավել ևս ավելանում են:

Փոխառության ամբողջ ժամանակաշրջանում (10 տարում), տոկոսաբեր շահող մասով 12 պարտատոմսի վրա, միջին հաշվով ընկնում ե մեկ շահում, իսկ անտոկոս շահող մեկ շահում՝ 5 պարտատոմսի վրա: Տարած պարտատոմսերը վճարվում են իրենց իսկական արժեքով (պարտատոմսի վրա գրված արժեքով), իսկ տոկոսաբեր շահող պարտատոմսով, բացի շահումից, վճարում են նաև ընթացիկ կըտրոնով աճած տոկոսները, մինչև այն վիճականության սկզբի որը, վորով նա շահեց: Տահած պարտատոմսերը մարվում ե հետաղա վիճակահանություններին չեն մասնակցում: Տահած պարտատոմսերի հատուցման համար սահմանված ե 10 տարվա ժամկետ՝ սկսած համապատասխան վիճակահանության վերջանալու որից:

V

ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

Փոխառության բաժանորդագրությունը և փոխառության վաճառքը կանխիկ հաշվով մինչև 1930 թ. նոյեմբերի 1-ի և, բացառիկ դեպքում, ԽՍՀՄ Ֆինժողկոմատի համաձայնությամբ, այս ժամկետին առանձին շրջանների համար կարող ե յերկարացվել ավելի յերկար ժամանակով:

Պարտատոմսերի իրացումը կատարվում է

բացառիկ կամավլոր սկզբունքներով: Պարտատոմսերի տարածումը գյուղական վայրերում կատարում են՝ գյուղաբնակչությունները, ինայողական գրամարկղները, շրջանային գյուղատնտեսական ընկերությունները, շրջանային գյուղատնտեսական բանկերը—շրջգործկոմների գեկավարությամբ ու հսկողությամբ:

«Հնգամյակը չորս տարում» փոխառության իրացումը գյուղական վայրերում կատարվում և կանխիկ հաշվով և կոլեկտիվ ու տնհատական բաժնեղրման կարգով: Կոլեկտիվների համար ժամանակի տևողությունը վորոշում են գավկործկոմները, կամ նրանց հանձնարարությամբ՝ շրջգործկոմները:

Կոլեկտիվ բաժնեղրմության վճարման ժամկետից ուղարկում են այն գյուղացիները, վորոնք մտնում են գյուղատնտեսական կոմունայի, արտելի, հողողագործման ընկերության մեջ, ինչպես և նրանք, ովքեր անդամ են կոոպերատիվների և արտելների, վորոնք ունեն գրամական հաշիվներ, վորպեսզի հնարավոր լինի պահել պարտատոմսի համար հաշված մուծումները: Գյուղական հիմնարկանունարկությունների բանվոր-ծառայողները նույնպես իրավուն ք ունեն կոլեկտիվ կերպով բաժանորդագրվելու:

Անհատ գյուղացիներին նույնպես հնարավորություն և տրվում 2-3 ամսում վճարելու ժամկետով պարտատոմսեր գնել: Պարտատոմսերի իրացումը պիտի կատարվի արագ և

կազմակերպված ձևով։ Յուրաքանչյուր աշխատավոր գյուղացու պարտքն ե բաժանորդագրվել «Հնդամյակը չորս տարում» փոխառությանը։ Յերկրում լայն կերպով տարածված ե սոցիալիստական մրցումը։ այն լայն կերպով պետք ե տարածվի նաև փոխառությունների իրացման վրա։ Սոցմրցումն աշխատանքի հիմնական մեթոդներից մեկը պիտի լինի քաղաքի և գյուղի մեջ փոխառությունները տարածելու գործում։

Կոլխոզնիկ, բատրակ, չքավոր, միջակ, կանգնեցեք մի ընդհանուր շարքի՝ բանվոր դասակարգի հետ։

Ամրացնենք ԽՍՀ Միության տնտեսական զղորությունն ու պաշտպանողական ունակությունը։

Հնդամյակի կատարումը 4 տարում, մեր ամենալավ պատասխանն ե դասակարգային թշնամիներին և համաշխարհային բուրժուազիային՝ սոցիալիստական կառուցումը կանցնելու նրանց փորձի դեմ։

«ՀՆԴԱՄՅԱԿՈՎ» ՆԱԽՍՊԱՏՐԱՍՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄ-ՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1.	ԳՅՈՒՂԱՏԵՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋԻ	52,100,0
	ա) Իրրողացիա և մելքորացիա	29,400,0
	Բնդամենը գյուղասանառեսության մեջ՝	81,500,0
2.	ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ	
	(Առանց բնակչության մեջ)	
	ա) Համամիութենական	39,500,0
	բ) Յերկրային (Հայբամբակ)	742,0
	գ) Հանրապետական (Ժողանտխորհ)	47,962,0
	դ) Տեղական	2,841,0
	յ) Արհեստագործական	1,155,0
	Բնդամենը արդյունաբերության մեջ՝	92,200,0
3.	ԵԼԵՔՏՐՈՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	
1.	Շրջանային կայաններ	19,000,0
ա)	Զորագես	7,500,0
բ)	Քանաքեռգես	8,500,0
գ)	Գծի հաղորդակցություն	3,000,0
2.	Տեղական կայաններ	4,744,0
	Նույն թվում՝	
ա)	Յերեվանի	735,0
բ)	Լենինականի	1,535,0
3.	Գյուղական կայաններ	1,256,0
	Բնդամենը ելեքտրոշինարարության մեջ՝	25,000,0

4. ԽՃՈՒՂԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նույն թվում՝

1.	Նոր յերկաթզային ճանապարհներ	11,400,0
ա)	Լենինականի արտիկ	3,600,0
բ)	Մինջևան կատար	4,200,0
գ)	Յեղեան—Մեան	2,000,0
2.	Անուելային ճանապարհներ	16,300,0

Նույն թվում՝

ա)	Համամիութենական ճանապարհներ	9,025,0	
բ)	Հանրապետական	»	4,622,0
գ)	Տեղական	»	1,772,0

3. Ներքին, ջրային ճանապարհներ (Մեջան) 600,0

Քնուամենը ճանապարհների շինարարութ. 28,300,0

5. ԲՆԱԿՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նույն թվում՝

ա)	Մունիցիպալ	19,500,0
բ)	Արդյունաբերական	12,500,0
շ)	Կոռուպերատիվ	4,000,0
դ)	Տրանսպորտի	2,000,0
	Քնուամենը բնակչինուրարության՝	38,000,0
6.	Կոմունալ շինարարության	11,000,0
7.	Առեւտրա-պահեստային շինարարության	8,400,0
8.	Սոցիալ-կուլտուրական շինարարության	17,200,0
9.	Ժողովրդական կատ	3,100,0

Քնուամենը կապիտալ ներդրումներ՝ 304,700,0

«Ազգային գրադարան



NL0205600

27980